



19(412)  
13.06.2015

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս համճարոյ

# ԼՍԱՐ

Լусар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԻՑ

Lusar

## ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՇԻՄՔՆ ԳԻՏԵԼԻՔՆ Է



Այս օրերին հանրապետությունում միասնական քննություններ են ընթանում: Դպրոցական կյանքի վերջին ակորդը, որը երբևէ լարումներով հագեցած իրադարձություն էր համարվում, այժմ կարծես թե խաղաղ, ինչ-որ տեղ նաև անշշուկ ընթացք ունի: Ինչպես ասում են՝ ապագա մասնագիտությունների ցանկն արդեն ընտրված է, և յուրաքանչյուր շրջանավարտ հիմա խնդիր ունի առավելագույն գնահատական ստանալ՝ իր երագանքի դառնը հասնելու համար:

Իսկ բարձր գնահատականի հիմքը դպրոցում ստացած գիտելիքն է, որի լիարժեք դրսևորման համար նոր քննակարգը միանգամայն բավարար հնարավորություններ է ընձեռում: Բոլորն էլ գիտեն, որ թափանցիկ ու անկաշկանդ քննությունները լավագույն երաշխիք են այն բանի, որ անհրաժեշտ գիտելիքներով օժտված դիմորդը նախընտրած բուհում սովորելու հնարավորություն անպայման կստանա: Սա է վկայում միասնական քննությունների անցկացման նախորդ տարիների փորձը:

Բնական է, քննությունների վերջնական արդյունքներին անհամբեր սպասող ծնողները ևս լարման մեջ են, քանի որ գնահատվում է ոչ միայն իրենց զավակների ձեռք բերած գիտելիքը, այլև դրվում է նրանց հասուն կյանքի առաջին հիմնաքարը: Կարդարանա՞ն նրանց սպասումները՝ պարզ կդառնա օրեր անց: Այնպես է մի բան՝ մեր հանրակրթարաններում արվել է հնարավոր ամեն բան, որպեսզի դպրոցականները ստանան պատշաճ կրթություն և դաստիարակություն: Իսկ մասնագիտություն ընտրելը անհատական խնդիր է, որը ձեռք բերելու համար ևս անհատական ունակություններ են պետք: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ չկան լավ կամ վատ մասնագիտություններ կամ արհեստներ, կարևորը այն հայրենիքին ու ժողովրդին անմնացորդ ծառայեցնելու կարողությունն է, ինչին մենք չենք կասկածում:

Ընթացքի մեջ են նաև ավարտական քննությունները: Սա նույնպես իրադարձային է իններորդ դասարանն ավարտածների համար, որովհետև նրանք պետք է որոշում կայացնեն՝ շարունակել ուսումը միջնակարգում, ավագ դպրոցում, թե՛ քոլեջում կամ արհեստագործական ուսումնարանում:

Նոր սկսվող ամառը թող ջերմություն հաղորդի քննաշրջանի մասնակիցներին՝ մղելով բարձրարդյունք ինքնադրսևորման: Բոլորին իրական հաջողություններ ենք մաղթում:

«ԼՍԱՐԱՐ»



## ԱՎԱՐՏԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2014-2015 ուստարում Քաշաթաղի շրջանի 51 հանրակրթական դպրոցներից 9-րդ դասարանն ավարտում են 78 աշակերտ՝ 29 դպրոցներից: 12-ամյա կրթության ծրագրի շրջանակներում այս աշակերտներն առաջիններն են, որ հինգուկես տարեկանում ընդունվեցին առաջին դասարան: Այս է պատճառը, որ համեմատած անցած տարիների՝ 9-րդ դասարանցիների քանակը քիչ է:

Հունիսի 10-ին շրջանի 5 քննական կենտրոններում անցկացվեց ավարտական քննություն մաթեմատիկայից: Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում քննություն հանձնեցին նաև Բերձորի Վահան Զատիկյանի անվան հ. 2, Քարեգահի, Սուսի Սերոբ Հանեյանի անվան և Սոնասարի Սամսոն Կյուրեղյանի անվան միջնակարգ և Հոջանցի Ավարդ Վարդանյանի անվան հիմնական դպրոցների թվով 23 աշակերտ: Քննական կենտրոնի ղեկավար, Բերձորի հ. 1 միջնակարգի տնօրեն Անահիտ Քոսակյանը տեղեկացրեց, որ նույն աշակերտները հայոց լեզվի քննությունից ստացել են դրական գնահատական: Իրենց կրթության 9 աշակերտներից 18 միավոր է ստացել Հասմիկ Մարտիրոսյանը, իսկ Նոնա Սահակյանը՝ 17: Բերձորի հ. 2 միջնակարգի 9 աշակերտներից համեմատաբար բարձր՝ 16 միավոր, ստացել է Տիգրան Մատինյանը: ԼՂՀ ԿԳՆ ԳԹԿ ներկայացուցիչ Արայիկ Պետրոսյանը նշեց, որ կենտրոնում աշխատանքները լավ են կազմակերպված, աշակերտները եկել են ժամանակին: Գոհ էր նաև հանձնախմբի անդամների (Համբարձում Արզանյան՝ Բերձորի հ. 2 միջն. դպրոցի տնօրեն, Վոլոդյա Գալստյան՝ Քարեգահի դպրոցի տնօրեն և Աստիկ Ավետիսյան՝ Սուսի դպրոցի տնօրեն) աշխատանքից: Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը տեղեկացրեց, որ քննական կենտրոններ են գործում նաև 4 այլ դպրոցներում: Կովսականի դպրոցի տնօրեն, կենտրոնի ղեկավար Սերոբ Քարամյանը հեռախոսով տեղեկացրեց, որ իրենց մոտ քննություն են հանձնում նաև Միջնական քաղաքի և Վան, Ծոբածոր, Ալաշկերտ, Դիցմայրի գյուղերի 13 իններորդցի, որից վեցը՝ Կովսականից: Ասաց նաև, որ հայոց լեզվի քննությունից Ալաշկերտի և Վանի դպրոցներից 1-ական աշակերտ ստացել են 7 միավոր: Առավելագույնը եղել է 14 մի-



ավոր, որն ստացել է իրենց դպրոցի սան, սիրիահայ Տոնի Մեղեդին: Ս. Քարամյանն անդրադարձավ նաև 12-րդ դասարանցիների քննություններին՝ նշելով, որ իրենց դպրոցի 6 շրջանավարտներից 2 հոգի հանձնում են միասնական քննություններ. սիրիահայ եվա Տոնասպետյանը քննություններ է հանձնում ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ ընդունվելու համար, իսկ Քնարիկ Սայադյանը ցանկանում է ընդունվել ԱրՊՀ ռուսաց լեզվի բաժին: Արևիկ Մարուքյանն էլ արդեն հարցազրույցի է մասնակցել Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտ ընդունվելու նպատակով: Այգեհովիտի միջնակարգ դպրոցում (ղեկավար՝ Մարիցա Հարությունյան) քննությանը մասնակցում են նաև Սարատակի, Իշխանաձորի, Հայկազյանի, Կունայրիի, Ծաղկաբերդի, Աղավնատան և Ուռեկանի աշակերտները: Եվա 2 կենտրոն գործում են իյուսիսային թևում՝ Մոշաթաղում (ղեկավար՝ Նարիս Սարգսյան)՝ Միրիկի, Տանձուտի և Լեռնահովիտի դպրոցների ընդգրկմամբ և Վարդուտում (ղեկավար՝ Ալբերտ Տոնոյան)՝ Ղազարապատի, Վաղազի, Արտաշավի և Բագմատուսի դպրոցներով: Խոսելով աշակերտների քննական արդյունքների մասին՝ Վ. Մովսիսյանը նշեց, որ անցած տարիների համեմատ արդյունքները ցածր են. 4 աշակերտ չի հաղթահարել դրական շեմը: Հիմնական պատճառն այն է, որ այս աշակերտներն ավելի փոքր տարիքից են դպրոց հաճախել, որն էլ իր բացասական ազդեցությունն է թողել, հավելեց Վ. Մովսիսյանը:

Ջոհրաբ ԸՈՒՅԱՆ

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՐՅՈՒՆՔՆԵՐ

ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնից ստացած տեղեկատվությանը՝ «Կենսաբանություն» առարկայի միասնական քննությանը հայտագրվել էին 78 հոգի, մասնակցել՝ 75-ը: Նրանցից 0-7,25 միավոր ստացել է, այսինքն՝ անցումային շեմը չի հաղթահարել 36 հոգի՝ 48 %: 7,5-13,25 միավոր, որը համարժեք է «բավարար» գնահատականին, ստացել է 18 հոգի (24 %): «Լավ»՝ 13,5-17,25 միավոր ստացել է 12 հոգի (16 %), 13,5-17,25 միավոր՝ 12 հոգի (16%), 17,5-20 միավոր, որը «գերազանց»-ն է, ստացել է 9 հոգի (12%): Մեկ հոգի ստացել է ամենաբարձր՝ «20» միավոր: Նա՝ Անի Ղազարյանը, Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցից է: ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանի տվյալներով՝ նախորդ տարվա համեմատությանը «անբավարար»-ների քանակը նվազել է 12 %-ով, «լավ» գնահատականներն ավելացել են: Դրականը դա է, բայց ընդհանուր վիճակը, ըստ ԳԹԿ տնօրենի, լավ չէ, քանի որ 48 % «անբավարար»-ը լավ ցուցանիշ չէ:

«Աշխարհագրություն» առարկայի միասնական քննությանը հայտագրված բոլոր 23 դիմորդները մասնակցել են: «Անբավարար» է ստացել 9 հոգի (39 %), «բավարար»՝ 9 հոգի 39 %, «լավ»՝ 4 հոգի՝ 18%, 1 հոգի «գերազանց» (4 %): Նախորդ տարվա համեմատությանը՝ «անբավարար»-ների քանակը տոկոսային հարաբերությանը կտրուկ աճել է 7 %-ից դարձել է 39 %: «Լավ» և «գերազանց» գնահատականները հիմնականում պահպանվել են: «Համաշխարհային պատմություն» առարկայի քննությանը հայտագրված 16 դիմորդներից մասնակցել է 15-ը, որոնցից «անբավարար» է ստացել 3 հոգի՝ 20 %, «բավարար»՝ 7 հոգի՝ 47 %, «լավ»՝ 5 հոգի՝ 33%, «գերազանց» չկա:

Նախորդ տարվա համեմատությանը հիմնականում պահպանվել են ցուցանիշները: Անցյալ տարի «գերազանց» եղել է, «լավ»՝ ոչ: Հիմա հակառակն է:

Յու. Քարամյանը տեղեկացրեց, որ 4 հոգի բողոքարկել են գնահատականների վերաբերյալ: Սովորաբար ԳԹԿ-ում ստուգ-

վում է բողոքարկման հավաստիությունը, թե որքանով են բողոքները հիմնավորված: Տեղին լինելու դեպքում բողոքը այստեղից ուղարկվում է ՀՀ ԳԹԿ՝ 3 հոգու դիմումը անհիմն էր, քանի որ սխալ էին ստուգել, իսկ մեկ հոգու բողոքը ուղարկել են Երևան, որը վերաբերում էր թվի գրությանը. պատասխանի ձևաթղթում պարզ չէր գրված 3, թե՛ 2 է, և հնարավոր է՝ համակարգիչը ճիշտ կարդացած չլինի: ԳԹԿ տնօրենը նորից հիշեցրեց, որ դիմորդները պատասխանների ձևաթղթերը լրացնեն պարզ, առանց շտապելու, պետք չէ նշանակված ժամկետից շատ շուտ ավարտել և թողնել քննասենյակը, ստուգեն մի քանի անգամ:

«Հայոց լեզու և գրականություն» առարկայից միասնական քննությանը մասնակցած 515 դիմորդներից (13 բացակա), 0-7,25 միավոր ստացել է 83 հոգի (16%), 7,5-13,25 միավոր, 125 հոգի (24 %)՝ 13,5-17,25 միավոր, 52 հոգի (10%)՝ 17,5-20 միավոր: Երեք հոգի ստացել է «20» միավոր՝ Ինճա Միմասյանը՝ ֆիզմաթ դպրոցից, Արևիկ Պետրոսյանը, Անի Մայիսյանը՝ Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցից:

ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանի տվյալներով՝ անցյալ տարվա համեմատությանը զգալի դրական շարժ կա: Այսպես, անցյալ տարի «անբավարար» ստացել էր դիմորդների 28%-ը, հիմա՝ 12 %-ով նվազել է, «լավ»-ը եղել է 18 %, հիմա՝ 6 %-ով ավելացել է, «գերազանց»-ը՝ 6 % էր, հիմա՝ 10 %:

Անցյալ տարի «20» միավոր հավաքել է երկու դիմորդ, հիմա՝ երեք:

Բողոքարկողներ չեն եղել: Ինչ վերաբերում է թեստերի մատչելիությանը, դրանց վերաբերյալ բողոքներ չեն եղել: Լավ սովորողի համար դրանք հեշտ էին, միջին կարողությունների դիմորդների համար՝ բարդ: «Նշանակվում է՝ նորմալ կազմած թեստեր են», - ասաց ԼՂՀ ԳԹԿ տնօրենը:

Սեփ.լրատվություն

ԸՆԹԱՅԸ

ԲԵՄՈՒՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐՆ ԷՆ

Ամեն լավը երեխաներին խորհրդային ժամանակներից եկող այս կարգախոսը իր նշանակությունը չի կորցրել նաև մեր օրերում: Ինչպիսի մանկավարժներ են զբաղվում մեր մանուկների դաստիարակությամբ, ինչ շնորհներով են օժտված, գեղարվեստական ինչ արժանիքներ ունեն, որ կարող են փոխանցել փոքրիկներին՝ այս նպատակն էր հետապնդում ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած մանկավարժների դաստիարակների գեղարվեստական մրցույթը Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում: Նախարարության նախադպրոցական և արտոնադպրոցական բաժնի պետ Աննա Այվազյանի խոսքով պատահական չէ նման մրցույթ անցկացնելու գաղափարը: Հունիսի 1-ը համարվում է նաև գեղարվեստական կրթության օր և պատեհ առիթ էր, որպեսզի մանկավարժների կուլեկտիվները ոչ միայն ցուցադրեն իրենց գեղարվեստական կարողությունները, այլև ծանոթանան միմյանց հնարավորություններին, ընդօրինակեն առաջավորներին:

Կուլեկտիվները պետք է հանդես գային ասունքի, երգի, պարի ժանրերում յուրաքանչյուրից՝ երկուական համարով իրենց հայեցողությամբ:

Ա. Այվազյանի պարզաբանմամբ նման ժանրեր են ընտրել՝ հաշվի առնելով, որ մանկավարժների դաստիարակը կարող է լավ ասունքել, երաժշտական ղեկավարը՝ լավ երգել, պարուսույցը լավ պարել, այսինքն՝ բոլոր մանկավարժները ի վիճակի են նշված ժանրերով մասնակցել մրցույթին: Բայց, ցավոք, մասնակից մանկավարժները շատ չէին՝ մեկ տասնյակ: Յուրաքանչյուր մանկավարժ փայլեց որևէ ժանրում, իսկ Ստեփանակերտի հ. 2 և Ասկերանի շրջանի Այգեստանի մանկավարժները՝ բոլոր

ժանրերում և իրավացիորեն զբաղեցրին առաջին տեղը: Երկրորդ տեղը զբաղեցրին Ստեփանակերտի հ. 1 և Մարտունու հ. 2 մանկավարժների կուլեկտիվները: Իսկ երրորդ մրցանակը բաժին հասան Բերձորի և Մարտակերտի հ. 1 մանկավարժները: Բոլորն արժանացան դրամական խրախուսանքի: Եղան նաև անվանակարգերում հաղթող անհատներ: «Լավագույն երգող» ճանաչվեց Ասկերանի շրջանի Ավետարանցի մանկավարժի դաստիարակչուհի Ֆլորա Խաչատրյանը, «Լավագույն ասունքող»՝ Ստեփանակերտի հ. 2 մանկավարժից՝ Ռենա Բարխու-

կիցների հասցեին: Նախ՝ բեն բարձրանալու համարձակության համար: Նշենք, որ երիտասարդների կողքին քիչ չէին նաև փորձառու դաստիարակները: Հաճելի էր նաև գեղեցիկ

րեցտարի նվազում են «Լավագույն դաստիարակ» ամենամյա մրցույթին մասնակցության հայտերը: Եվ ըստ իրեն՝ հասկացավ պատճառը. դաստիարակների ճնշող մեծամասնությունը արտահայտիչ ասունքել, չգիտե, երաժշտական ղեկավարները երգել, էլ ինչպես նրանք կարող են սովորեցնել երեխաներին: «Այդ առումով միակ լավ բանն այն էր, որ նկատեցինք, որ մենք ճիշտ ենք վարվել, երբ մանկավարժներին հատկացրել ենք պարտություններ: Պարտով մանկավարժները չեն փայլեցին», - ասաց Ա. Այվազյանը: Ստահագիչ էր նաև, թե ինչու փոքր մանկավարժները չեն մասնակցել: Նշանակում է՝ այնտեղ տնօրենը, դաստիարակը, երաժշտական ղեկավարը գեղարվեստական շնորհներ չունեն: «Ուրեմն ինչ որ բան այն չէ կարոյինք քաղաքականության հարցում, մարդիկ իրենց տեղերում չեն, և մենք վստահել են նրանց մեր երեխաներին», - ցավով արձանագրեց Ա. Այվազյանը:

Ավելացնենք, որ երեկոյան ցուցադրվեց համերգ, որում ներառվել էին մրցույթի լավագույն համարները: Մասնակիցներին միացել էին մայրաքաղաքի դպրոցներից կից գործող նախադպրոցական խմբերի երեխաները: Համերգին ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Այվա Արսյանը, «Ղարաբաղ Տեղեկոմ»-ի գլխավոր տնօրեն Կարեկին Օռաբաշյանը: Ի դեպ, համերգին մասնակից երեխաները գրքեր նվեր ստացան «Ղարաբաղ Տեղեկոմ»-ի կողմից:



դարյանը, «Լավագույն պարախուսում»-ը Շուշիի Ավետարանչական մանկավարժներին էր: Նրանք պարզատրվեցին հուշանվերներով: Մրցույթի ակտիվ մասնակից ճանաչվեց և նախարարության պատվոգրով պարգևատրվեց Մարտունու հ. 1 մանկավարժի կուլեկտիվը: Բոլորին շնորհավորեց և պարգևները հանձնեց ԼՂՀ փոխնախարար Սիքայել Համբարձումյանը:

Հանձնախմբի նախագահ, ԿԳԼ կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանը գովեստի խոսքեր հնչեցրեց մասնա-

«ԿԵՆԳՈՒՐՈՒ-2015»-Ի ՄՐՑԱՆԱԿԱԲԱԸՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած ուսումնական տարին ավարտված լինելուն՝ հունիսի 3-ին Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի դահլիճը լեվի-լեցուն էր մայրաքաղաքի և շրջանների դպրոցների աշակերտներով, ուսուցիչներով, ծնողներով: Հավաքվելու առիթը «Կենգուրու-2015»-ի մրցանակաբաշխությունն էր:

Ներկաներին ողջունեց և երեխաներից շատերի համար առաջին հաղթանակի և բոլորին՝ հաջողությունների համար շնորհավորեց ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Սիքայել Համբարձումյանը:

«Կենգուրու» մաթեմատիկական խաղ-մրցույթը ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Արցախում տարեցտարի դառնում է ընդգրկում: 24 տարի առաջ, երբ Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի դպրոցներից մեկի մաթեմատիկայի ուսուցչի առարկան հետաքրքիր դարձնելու համար հնարած խաղի գաղափարով Ֆրանսիայում անցկացվեց այս մրցույթը, մասնակցում էին 120 հազար ֆրանսիացի երեխաներ, հիմա ամբողջ աշխարհում մասնակից երեխաների թիվն ավելի քան 7 մլն է, երկրներինը՝ 67:

2010-ից մրցույթը «Այբ» կրթական հիմնադրամի միջոցով անցկացվում է նաև Արցախում: Այս տարի մրցույթին մասնակցել են Արցախի 65 դպրոցների 3-12-րդ դասարանների 1994 երեխաներ: Նրանցից հինգը՝ Արամ Պիլիյանը (Ստեփանակերտի հ. 1 դպրոց, 4-րդ դաս.), Տիգրան Կիսիբեկյանը (Ստեփանակերտի հ. 2 դպրոց, 5-րդ դաս.), Անի Շահրամանյանը (Ասկերանի միջնակարգ դպրոց, 5-րդ դաս.), Ալեքսեյ Գալստյանը (Մարտակերտի վ. Բալայանի անվան հ. 1 միջնակարգ դպրոց, 6-րդ դաս.), Հերմինե Դայիյանը (Ստեփանակերտի հ. 8 դպրոց, 8-րդ դաս.), գրանցել են լավագույն արդյունքներ, այսինքն՝ հաղթահարել են միավորների պահանջվող շեմը: Իսկ 60 մասնակիցներ լավագույն են դարձել իրենց դպրոցների մակարդակով: Ասել է թե՛ չկա դպրոց, որ մրցանակակիր աշակերտ չունենա: Դա մրցույթի առանձնահատկությունները մեկն է: Արցախից այս տարի էլ բացարձակ հաղթող չունեցանք. այր-

պիսին կոչվում է նա, ով բոլոր առաջադրանքները ճիշտ է լուծում, կամ մեկ խնդիր չի լուծում, կամ սխալ է լուծում: Հաղթող բոլոր չորս երեխաներն էլ ՀՀ-ից են: Հետաքրքիր է, որ նրանց մեջ կան այնպիսիները, որոնք երկրորդ կամ երրորդ անգամ են հաղթում, կամ հաղթող ունեցող ընտանիքի մեկ այլ երեխան է: Ի դեպ, այս երևույթը նկատելի է նաև Արցախում: Այսպես, Տիգրան Կիսիբեկյանը երրորդ անգամ է «Կենգուրու»-ում լավագույն արդյունք ցուցաբերում: Նույնքան անգամ էլ՝ «Ռուսական արջուկ»-ում: Այդ հանգամանքը



նկատի ունենալով՝ ԼՂՀ ԿԳ փոխնախարարը պարզապես պահանջեց Տիգրանից. «Հաջող տարի դու պետք է հաղթող լինես, այլ տարբերակ չեն տեսնում»: Մրցանակները հանձնեց «Այբ» կրթական հիմնադրամի դպրոցական միջազգային մրցույթների ծրագրերի ղեկավար Շուշան Կարապետյանը: Նա նախ մրցույթին մասնակից բոլոր դպրոցներին հանձնեց մասնակցության հավաստագրեր՝ շնորհակալություն հայտնելով տնօրեններին, որոնց շահագրգռությամբ են երեխաները մասնակցում մրցույթին, ծնողներին և իհարկե՝ երեխաներին՝ իրենց ուժերը չափելու քաջության

համար: Հատուկ մրցանակ ստացած երեխաները պարգևատրվեցին նաև նվերներով, իսկ լավագույն արդյունք ցուցաբերածները դրանց հետ միասին՝ պատվոգրով, մրցույթի խորհրդանիշ կենգուրու փափուկ խաղալիքով, իսկ նրանցից բարձր դասարանի երկու աշակերտ՝ նաև մրցույթի խորհրդապատկերով ուսապայուսակով:

Շ. Կարապետյանը մանրամասն անդրադարձավ մրցույթի նպատակներին, առանձնահատկություններին, ինչու չէ՛ նաև խախտումներին, որոնք, իհարկե, աննկատ ու անհետևանք չեն մնում: Նա մի տեսակ փաստի մասին խոսեց, եղել են արտագրությունների, օգնելու (անգամ՝ ուսուցիչների կողմից) փաստեր: Նման երևույթները մրցույթի կազմակերպիչները հատուկ մեթոդներով հետաքրքրված բացահայտում են, և իմաստ չունի կարգը խախտել: Քանի որ բոլորովին միտում չունեն որևէ դպրոցի, երեխայի պախարակելու (ոչ մեկը, բացի տվյալ դպրոցից ու աշակերտից, չգիտի, թե քանի դպրոց է որակագրվել), նմանների անունները չեն բարձրաձայնում, բայց շատ կարևոր է այս երևույթի մասին ահազանգելը. առաջին մի քանի տարիներին մրցույթը բացարձակ մաքուր էր անցկացվում Արցախում, բայց վերջին 2 տարիներին սկսել են հայտնվել արտագրությունները նշույլներ: Դա պատիվ էլ բերում մեզ:

Բոլոր մասնակից դպրոցները, աշակերտները ստացան «Կենգուրու-2014»-ի խնդրագրեր: Շ. Կարապետյանը տեղեկացրեց, որ նախորդ տարիների խնդրագրերը վաճառվում են գրախանութներում, և երեխաները կարող են ձեռք բերել և պարապել ամառվա ընթացքում: Նրա խոսքով, հաղթողներին ոչ հաղթողների մակարդակների տարբերությունն այնքան էլ մեծ չէ: Պարզապես առաջինները իրենց ուղեղները միշտ մարզում են տրամաբանական խնդիրներ լուծելով: Դրանում օգտակար կարող են լինել հիշյալ խնդրագրերը:

Ս.ԱՆՉԱՏՐՅԱՆ

ՇՆՈՐՀԱՇԱՏ ՄԵՐ

Արդեն հինգերորդ տարին է, ինչ «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամը կազմակերպում է օլիմպիադա հայոց լեզու, գրականություն, մաթեմատիկա և անգլերեն առարկաներից:

Թեքեյանական 5-րդ օլիմպիադային այս տարի մասնակցեցին Երեւանի, Գյումրիի, Ստեփանակերտի, Կարբիի և Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորի վ. Թեքեյանի անվան դպրոցների 8-րդ դասարանի թվով 70 աշակերտ: Բերձորից օլիմպիադային մասնակցեցին 8 աշակերտ՝ Հայկուհի Մասկանա, Շողեր Ավետյան, Սյուզաննա Սահակյան, Անի Խոջոյան (հ. լեզու և գրականություն), Նարեկ Մաթևոսյան, Մուշեղ Մարտիրոսյան, Հասմիկ Հովհաննիսյան (մաթեմատիկա), Սերգեյ Խաչատրյան (անգլերեն): Դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանի, հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցչուհիներ Նոնա Գալստյանի և Նուհնե Հակոբյանի ուղեկցությամբ երեխաները մեկնեցին Երևան, մասնակցեցին օլիմպիադային, և Հայկուհի Մասկանան ու Շողեր Ավետյանը տուն եկան առաջին և երրորդ մրցանակները շահած: Վերջերս հանդիպեցի մրցանակակիրներին, գրուցեցի նրանց հետ: Հայկուհին սիրում է հատկապես գրականություն առարկան. ընթերցել է գեղարվեստական շատ գրքեր, որոնցից տպավորվել են Բաֆֆու «Սամվել»-ը, Մուրադյանի «Գևորգ Մարգարեանի»-ն, Բակուրյանի «Սթենդոր»-ը, Ստ. Ջորջանի «Ջորջի մոտ»-ը և այլն: Լավ է սովորում նաև հայոց լեզուն, և պատահական չէ, որ 28 մասնակիցների մեջ 13,5 միավորով արժանացավ առաջին մրցանակի:

Երբ «Թեքեյան կենտրոն»-ի տնօրեն Արմեն Ծուլիկյանը հայտարարեց մրցանակակիրների անունները, պատմում է Շողերը, - առաջինն իմ անունը հնչեց՝ երրորդ մրցանակ (11,5 միավոր): Երկրորդը Երևանի դպրոցի աշակերտ էր: Եվ անսպասելի լսում ենք Հայկուհու անունը՝ առաջին մրցանակ պլանշետ:

Ուրախությունից արցունքոտվում են Հայկուհու աչքերը, և հուզված ստանում է մրցանակը: Ընտանիքում միակողմանի ծնողազուրկ 6 երեխա են: Չորսը՝ այդ թվում Հայկուհին, Բերձորի գիշերօթիկ հաստատության սաներ են: Բոլորն էլ լավ են սովորում, երրորդ դասարանից քույրը նաև բանաստեղծություններ է գրում: Հայկուհու մասին լավ է խոսում հայոց լեզվի ուսուցչուհին. «Խելացի ու համեստ աշակերտուհի է, լավ է սովորում, պարտաճանաչ է»:

Սիրում է նաև քիմիա առարկան, երգում է ռազմախայրե առարկաներ երգեր: Հետագա անելիքը դեռ չի որոշել: Բայց ցանկանում է ունենալ իր տունը, ընտանիքը: Իրենց դասընկերուհուն շատ են սիրում համադասարանիցները, և բոլորն էլ ուրախ էին նրա հաջողության համար: Երրորդ մրցանակի արժանացած Շողերը, այնուամենայնիվ, դժգոհ է ցուցաբերած արդյունքից. շտապել է: Սովորում է նաև Բերձորի արվեստի դպրոցի դաշնամուրի 6-րդ դասարանում. սիրում է նվագել: Դպրոցական առարկաներից լավ է սովորում ռազմագիտությունը, երկրաչափությունը, աշխարհագրությունը: Հետագա անելիքը հաստատ չի որոշել, բայց երկ մոր ճանապարհով գնա՝ դառնա բժշկուհի: Երևան մեկնած աշակերտները ուրախ էին նաև, որ այդ օրերին մասնակցել են մշակութային մի շարք միջոցառումներին: Այցելել են Օիթեռնակաբերդ, Նորավանք, Պատանի հանդիսատեսի թատրոնում դիտել են Մեծ եղեռնին նվիրված ներկայացում: «Թեքեյան կենտրոն»-ում նաև մասնակցել են երգի և ասունքի հանդեսի: Հասմիկ Հովհաննիսյանն արտասանել է Ռ. Սևակի, Վարուժանի բանաստեղծություններից: «Թեքեյան կենտրոն»-ը յուրաքանչյուր տարի վերոհիշյալ դպրոցների սաների համար կազմակերպում է ամառային հանգիստ ՀՀ առողջարանային քաղաքներում: Շողերն ուրախ էր նաև, որ հանդիպել է անցած ամռանը Մեղրաձորում միասին հանգստացած ընկերներից, ովքեր նույնպես մասնակցում էին օլիմպիադային: Ստորում են հաջողություններ մեր երեխաներին, որ իրականացան նրանց երազանքները:

Զ. ԼՈՒԵՈՍԱՆ

# ՈԼՈՐՏ, ՈՐՏԵՂ ԱՇԽԱՏԱՑՏԵՂԵՐԸ ՀԱՏ ԵՆ, ՄԱՍՆԱ-

## SS ՈԼՈՐՏԻ ՄԵՆԵՐԻ ԹԵՎԱԿՈՐ ԽՈՍՔԵՐԸ

\*\*\*

**Սթիվ ՋՈՒՍՍ** - Աշխարհահռչակ Apple ընկերության հիմնադիր:

• Չկան հաջողակ մարդիկ, որոնք երբեք կյանքում չեն ընկրկել կամ սխալներ թույլ չեն տվել: Կան միայն հաջողակ մարդիկ, որոնք թույլ են տվել սխալներ, սակայն հետո փոխել են իրենց պլանները՝ հիմնվելով անցյալի անհաջողությունների վրա: Ես հենց նման մարդկանցից եմ:

• Դուք չեք կարող պարզապես հարցնել հաճախորդներին, թե ինչ է նրանց հարկավոր, քանի որ նման պահին, երբ դուք դա անեք, նրանք արդեն ինչ-որ նոր բան կցանկանան:

• Ես միակ մարդն եմ, որը գիտի, թե ինչ է նշանակում տարեկան կորցնել քառորդ միլիարդ դոլար: Դա շատ է նպաստում անհատականության ձևավորմանը:

• Իմաստ չունի աշխատանքի վերցնել մարդկանց, հետո նրանց ասել, թե ինչ պետք է անեն: Մենք աշխատանքի ենք վերցնում մարդկանց, որ նրանք ասեն, թե մենք ինչ պետք է անենք:

• Ինձ համար կարևոր չէ լինել ամենահարուստ մարդը գերեզմանոցում: Քննելիս պառկել այն մտքով, որ դու ստեղծել ես հրաշալի մի բան. ահա թե ինչը ինձ համար նշանակություն ունի:

• Երբեմն կյանքը խիստ է ձեր գլխին աղյուսով: Մի կորցրեք հավատը: Ես վստահ եմ, որ միակ բանը, որը օգնել է ինձ շարունակել գործը, այն էր, որ ես սիրում էի այն: Դուք պետք է գտնեք այն, ինչ սիրում եք: Եվ դա նույնքան ճշմարիտ է ինչպես աշխատանքի, այնպես էլ հարաբերությունների համար: Չեք աշխատանքը լցնում է ձեր կյանքի մեծ մասը, և ամբողջությամբ գոհ լինելու միակ եղանակը անելն է այն, ինչ ձեզ իսկապես մեծ գործ է թվում: Եվ մեծ գործեր անելու միակ եղանակը սիրելն է այն, ինչ անում եք:

• Մահվան մասին հիշողությունը լավագույն եղանակն է խուսափելու մտքերից, որ կորցնելու բան ունեք: Դուք արդեն հերքել եք: Դուք չունեք պատճառ՝ գնալու ձեր սրտի կանչի հետևից:

• Երբ դու երիտասարդ ես, նայում ես հեռուստացույց ու մտածում, թե հեռուստաընկերությունները պայմանավորվել են մարդկանց հիմարացնել: Սակայն երբ ավելի ես մեծանում, հասկանում ես, որ դա այդպես չէ: Մարդիկ իրենք են դա ուզում: Եվ դա ավելի է տխրեցնում:

• Հարկավոր է հաճախ ասել մարդկանց այն մասին, թե ինչ եք ստեղծել: Իհարկե, պետք չէ դա փաթաթել մարդկանց վզին: Բայց, այդուհանդերձ, պետք չէ համապատասխան պահին ամաչել հայտնել մյուսներին, թե ինչ եք դուք ստեղծել:

• Ես տեխնոլոգիայի մասին իմ բոլոր գիտելիքները կփոխարինեի Սոկրատեսի հետ անցկացրած 1 օրվա հետ:

• Մնացեք քաղցած, մնացեք խենթ:

\*\*\*

**Քիլ ԳեթՅՍ** - Մայքրոսոֆթի աշխարհի ամենամեծ ծրագրային ապահովման ընկերության նախկին գործադիր տնօրեն և ներկայիս նախագահ, ամերիկացի բիզնես մագնատ, հերթահաճախային ծրագրավորող և բարերար:

• Կյանքը արդար չէ, համակերպվեք այդ մտքի հետ: • Հոգ տարեք Ձեր մասին: Ենկատագիրը չի ժպտա Ձեզ, եթե չհոգանք Ձեր մասին:

• Համալսարանն ավարտելով՝ Դուք չեք դառնա կազմակերպության նախագահ՝ ավտոմեքենայում տեղադրված ամենաժամանակակից հեռախոսով, մինչև չգտնեք արժանապատիվ աշխատանք, որը թույլ կտա հասնել այդ ամենին:

• Եթե գտնում եք, որ Ձեր դասախոսը խիստ է, մի շտապեք եզրակացություններ անել: Դուք դեռ չունեք ղեկավար, որը, ի տարբերություն դասախոսի, պայմանագրով չի աշխատեցնում:

• Եթե գտնում եք, որ համբուրգեր պատրաստելը ձեր արժանապատվությունից ցածր է, հարցրեք Ձեր տատիկին կամ պապիկին, թե ինչ են նրանք մտածում: Նրանց ժամանակներում այդ աշխատանքը համարվում էր հնարավորություն:

• Եթե սխալներ եք անում, մի նվճարեք և մի մեղադրեք Ձեր ծնողներին, սովորեք Ձեր սխալներից: • Մինչև թո՛ղ ծնվելը թո՛ղ ծնողներն այդպես ձանձրալի չլինեն: Նրանք այդպիսին դարձան Ձեր հաշիվները փակելով, Ձեր հազուստը կարգի բերելով, Ձեր պատմությունները և բողոքները լսելով: Հետևաբար, աշխարհը ծնողներին պաշտող երեխաներից փրկելու փոխարեն կարգի բերեք Ձեր զգեստապահարանները:

• Միզուցեք ձեր ուսումնական հաստատություններում չկան պարտվողներ և հարցողներ, սակայն կյանքում ամեն ինչ այլ կերպ է: Որոշ համալսարաններում վատ գնահատականներին ուշադրություն չեն դարձնում, ուսանողներին տալիս են այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է ճիշտ լուծում գտնելու համար: Իրական կյանքում չկան այդպիսի բաներ:

• Կյանքը բաժանված չէ կիսամյակների: Դու չես ստանա ամառային արձակուրդ, իսկ թո՛ղ ղեկավարները հետաքրքրված չեն թո՛ղ խնդիրներ օգնելու հարցում: Զբաղվիր այդ ամենով անձնական ժամանակի ընթացքում:

• Հեռուստացույցը իրական կյանքը չէ: Իրական կյանքում մարդիկ ստիպված են թողնել սրճարանը և գնալ աշխատանքի:

• Ներքի հիմարներին և բարի եղիր նրանց նկատմամբ: Հնարավոր է, որ մի օր դու կաշխատես նրանցից մեկի մոտ:

ցի լավ շրջանավարտներն են գերադասում ընդունվել այս, ինչու չէ՞՝ նաև «Հեռահաղորդակցություն» մասնագիտությամբ»: Ի դեպ, այստեղ բոլոր ուսանողները սովորում են անվճար. մի մասը՝ պետպատվերով, մի մասի վարձավճարը փոխհատուցում է Հայ կրթական հիմնադրամը: Հաջողվել է կազմակերպել համագործակցություն այնպիսի ընկերությունների հետ, ինչպիսին են «Ինտիգրեյթ»-ը, «Սինթեզի»-ն, «Սինոփսիս»-ը, ինչը հնարավորություն է ստեղծել, որ ուսանողները համալսարանն ավարտելուց անմիջապես մտնեն այդ ոլորտ՝ որպես որակյալ մասնագետներ:

Ա. Եղոյանը փաստեց, որ ծրագրավորման ոլորտում թանկ են և ծառայությունները և դասախոսությունները, ինչն իրականացվում է դարձյալ Հայ կրթական հիմնադրամի աջակցությամբ: Փորձելու են գործնական կրթության որակը բարձրացնել: Գործատուի ու բիզնեսի համար աշխատատեղեր ստեղծելու առաջին գլխավոր պայմանը որակյալ աշխատուժն է: Անշուշտ, լավ միջավայր, համապատասխան ենթա-

կայքեր, որոնք առաջարկում են առցանց աշխատանքներ: ՏՏ ոլորտում աշխատավարձերը ֆիքսված չեն. դա կապված է աշխատողի մասնագիտական աճի հետ:

Անդրադառնալով ուսումնական գործընթացի կազմակերպմանը՝ Գ.Բաղդուցն ասաց, որ խնդիր ունենալով պատրաստել գործնական կարողություններով ուսանողներ՝ ստեղծել են մի ճկուն համակարգ, որը կնպաստի, որ այս ոլորտի շրջանավարտները պատրաստ լինեն համալսարանն ավարտելուց անմիջապես մտնել այդ ոլորտ՝ որպես արդեն իսկ պատրաստ մասնագետներ: Այդ նպատակով Ամերիկայի գործընկերների՝ Հայ կրթական հիմնադրամի ներկայացուցիչների հետ 2011թ. մշակել են այնպիսի ուսումնական պլաններ, որտեղ ընդգրկվել են 8 ժամանակակից առարկաներ, որը թույլ կտա աշխատաշուկայի պահանջները բավարարող շրջանավարտներ թողարկել: Այդ առումով նա շնորհակալություն հայտնեց Հայ կրթական հիմնադրամի մասնագետներին, որոնք հաճախակի իրենց պատվիրակություններով ներկայանում են ԱրՊՀ, և իրենց ներկայացուցիչներն էլ դասավանդում են զուտ մասնագիտական առարկաները, և դա նպաստում է, որ ուսանողները լրիվությամբ տիրապետեն ոլորտի նորություններին, առաջահերթ ուղղություններին:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Երիկ Գրիգորյանն էլ իր հերթին փաստեց, որ քաջ գիտակցելով ոլորտի հեռանկարային լինելը՝ աշխատանքներ են տանում դպրոցում աշակերտների բազային գիտելիքների ընդլայնմանն այս ոլորտում: Դա ՆՈՒԲ ծրագիրն է, համակարգչային-տեղեկատվական դասարաններ ստեղծելը, «dasarano.am» ծրագիրը, ոլորտով հետաքրքրվող դպրոցականների և ուսանողների համար Ծանկահողում ամառային դպրոցը և այլն: Դպրոցներում անհրաժեշտ նվազագույն պայմանները ստեղծված են, թեկուզ անելիքներ դեռ շատ կան՝ ասաց նա:

Խոսելով Արցախում ՏՏ ոլորտի հեռանկարայնության մասին՝ Գ. Բաղդուցն ասաց, որ չպետք է մոռանալ մի անձնավորության մասին, որը կանգնած է եղել նրա ակունքներում, ով ինչպես է տվել IT տեխնոլոգիաների զարգացմանը: Դա համալսարանի ուսումնական գծով ներկայիս պրոռեկտոր Գեորգի Սահակյանն է, որի ներդրումը մեծ է այս ոլորտում:

Գ. Սահակյանը խորհուրդ տվեց ուսանողներին չսահմանափակվել դասախոսություններով, որոնք գիտելիքի միայն 30-40 տոկոսն են տալիս, մնացածը կախված է իրենցից՝ ուսանողներից: «Ես միշտ շեշտում եմ, որ ամենաբարձր մասնագիտությունն է դա, անընդհատ պետք է աշխատես, ինչպես ասում են՝ մկնիկը կլիմեթերով պետք է շարժես: Իսկ մասնագետ դառնալուց հետո դուք արդեն հաճույքը զգալու եք»: Հուրախությամբ արձանագրեց, որ այս տարվա ընդունելությունը վատ չէ, 20-ից ավելի ուսանողներ ցանկություն են հայտնել «Տեղեկատվական համակարգեր» մասնագիտությամբ սովորելու:

Նա կոչ արեց երիտասարդներին այս մասնագիտությունն ընտրել, իսկ այն ուսանողներին, ովքեր արդեն սովորում են այս գծով, չհնայեն եռանդը, շատ աշխատեն, քանզի աշխատելով միայն կարող են դառնալ ծրագրավորող: Այս մասնագիտության բարդությունն այն է, որ բացառում է ցածր կամ միջին մակարդակի մասնագետների մուտքը այս ոլորտ: Այստեղ պետք են ստեղծագործ մտածելակերպով ուսանողներ, որոնք կարող են նախագծեր առաջարկել, հետաքրքիր մտքեր, առաջարկություններ տալ, և, իհարկե, ունենալ շատ լավ պատրաստականություն: Եթե չաշխատեն, միայն դիպվում ստանան, ոչ մի բան չի տալու նրանց: Իսկ եթե լինեն լավ մասնագետ, իրենք են գործատուին թելադրելու իրենց անհրաժեշտ պայմանները:

### Սվերլանա ԽԱՆՍՐՅԱՆ



կառուցվածքներ ունենալը շատ կարևոր է, բայց ամենակարևորը ուսանողների ցանկությունն է և տրամադրվածությունը, որպեսզի նրանք կարողանան դառնալ ոլորտի լավ մասնագետներ: Նա կոչ արեց ուսանողներին՝ լավ տիրապետել տեղեկատվական տեխնոլոգիաներին, որովհետև այս պահին Երևանում և Գյումրիում կան ավելի շատ աշխատատեղեր ՏՏ ոլորտում, քան մասնագետներ, և պահանջարկն օր օրի աճում է: Լինելով Արցախի ՏՏ նորաստեղծ հիմնադրամում՝ վստահ է, որ աշխատատեղերը աճելու են նաև Ստեփանակերտում, որովհետև բոլոր ընկերությունները հետաքրքրված են իրենց մասնաճյուղերն ունենալու այստեղ: Սակայն գլխավոր պայմանը որակյալ կադրն է. մինչև չլինի որակյալ կադր, նրանք չեն կարող այդ շիփակին դիմել: «Հույս ունեմք, որ հաջորդ անգամ, երբ հանդիպում ունենանք համալսարանում, կտեսնենք ուսանողներին, ովքեր ընտրել են մասնագիտություն իրենց և Արցախի ապագայի համար և ոչ թե ընտրել են մասնագիտությունը, որովհետև չեն կարողացել հաղթահարել մոդալիկ համարվող բաժինների միավորները»,- ասաց նա՝ ակնկալելով, որ աշակիցների շնորհիվ կկարողանան ոլորտը զարգացնել և 10 տարի հետո ինչպես Գյումրիում, այնպես էլ Արցախում կունենան 15 ընկերությունների մասնաճյուղեր: Ա. Եղոյանը հավելեց, որ ՏՏ ոլորտը արագ է զարգանում, ստիպված են ուսումնական առարկայացանկը վերանայել, որպեսզի կարողանան ընկերություններին աշխատողներ մատակարարել: Ասաց, որ այդ այդ գործընթացը ժժվարանում է, որովհետև արդեն ունեն մոտ 40 տոկոսի խնդիր. ավելի շատ թափուր աշխատատեղեր կան, քան իրենք կարող են առաջարկել մասնագետներ: Դրանով է պայմանավորված, որ կենտրոնի 200 շրջանավարտներ դեռևս չավարտած՝ աշխատում են, անգամ համալսարանի կարգով երկու ընկերությունում: Պատասխանելով աշխատավարձերի մասին հարցին՝ Ա. Եղոյանն ասաց, որ սա այն ոլորտն է, երբ նույնիսկ որևէ ընկերություն, եթե Ստեփանակերտում չլինի էլ, երիտասարդները կարողանալու են իրենց գիտելիքներով, տանը ունենալով միայն համակարգիչ և ինտերնետ կապ, աշխատել և գումար վաստակել ավելի, քան եթե ֆիզիկապես աշխատանքի կընդունվեն որևէ հիմնարկությունում: Կան բազմաթիվ

Տեղեկատվական տեխնոլոգիաները հանդիսանում են մեր հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ամենախոստումնալից և հեռանկարառային ուղղություններից մեկը: ՏՏ ոլորտի ներուժի զարգացման ուղղությամբ կատարվում են գործնական քայլեր:

Մայիսի 26-28-ը Արցախի պետական համալսարանը հյուրընկալել էր Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի մի խումբ աշխատակիցների՝ տնօրեն Ամալյա Եղոյանի գլխավորությամբ: Այցի նպատակները, ծրագրերը ներկայացվեցին ասուլիսում, որին մասնակցում էին ուսանողներ, ոլորտի կրթական պատասխանատուներ, լրագրողներ:

Ա. Եղոյանը նախ ներկայացրեց այն ծրագրերը, որոնք իրականացվում են Հայ կրթական հիմնադրամի աջակցությամբ, որից անմասն չէ Արցախը: Հայ կրթական հիմնադրամը գտնվում է ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում, Գլենդեյլում և շատ վարչուր Հայաստանում և Արցախում իրականացնում է կրթական աջակցող ծրագրեր: Գյումրիում ՏՏ կենտրոնը գործում է 2005 թվականից՝ ՀՀ-ի աջակցությամբ, և իրականացնում է բուհական երկամյա տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում՝ Վեբ տեխնոլոգիաների և մոբայլ տեխնոլոգիաների բաժիններում: Ծրագրի նպատակը, ինչպես անունն է հուշում՝ աջակցել բուհն ավարտած ուսանողներին՝ լրացուցիչ վերապատրաստում ստանալ ծրագրավորման ոլորտում և բավարարել Հայաստանում առկա ՏՏ ոլորտի շուկայի պահանջները: Կենտրոնը Հայ կրթական հիմնադրամի հետ սկսեց աշխատել 2010 թվականից, երբ նրա կողմից Արցախում դպրոցներ վերանորոգվեցին, և պատրաստվում էին այդ դպրոցներին համարակիցներ ու տալիս արքեթ8 նվիրաբերել, քանի որ ցանկանում էին, որ այդ տեխնոլոգիաներն օգտագործվեն առավելագույն գործնական կիրառմամբ: Հայ կրթական հիմնադրամի առաջարկով՝ Գյումրիի ՏՏ կենտրոնը Ստեփանակերտի ինֆորմատիկայի առարկայի ուսուցիչներին վերապատրաստեց ծրագրավորման ոլորտում:

2014թ. Գյումրիի ՏՏ կենտրոնի մասնագետները Հայ կրթական հիմնադրամի աջակցությամբ վերապատրաստեցին Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու շրջանների դպրոցների ինֆորմատիկայի 50 ուսուցիչներին, և այդ դպրոցները՝ որպես նվիրատվություն, երկուսական համակարգիչ նվեր ստացան:

Գյումրիի ՏՏ մասնագետները այս անգամ Արցախ էին եկել Հայ կրթական հիմնադրամի աջակցությամբ մեկ այլ ծրագիր իրականացնելու՝ համալսարանում այդ մասնագիտությունը ստացող ուսանողների հետ հարցազրույցների միջոցով հաշվետվություն կազմելու աշխատաշուկայի պահանջի և կրթական գործընթացի արդյունքի հարաբերակցության մասին, ներկայացնելու նաև համալսարանի առաջարկները՝ այդ ծրագրերը ավելի նպատակային ու գործնական դարձնելու համար:

ԱրՊՀ դասախոս Գագիկ Բաղդուցը, ով մինչև ԼՂՀ Աժ պատգամավոր ընտրվելը համապատասխան ֆակուլտետի ղեկավան էր, ներկայացնելով համալսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նախապատմությունը, ասաց, որ ետպատերազմյան հենց առաջին տարիներից է հարց բարձրացրել Արցախում IT տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար: 2011-2012 ուստարում կատարվեցին առաջին կազմակերպչական քայլերը Հայ կրթական հիմնադրամի օժանդակությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտությունը կրթություն կազմակերպելու ուղղությամբ: 2012-ից ԱրՊՀ-ում ընդունելություն կատարվեց «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մասնագիտությամբ: «Մեր հանրությունը, համալսարանի միջավայրը արդեն իսկ հասունացել էին նման մասնագիտություն ունենալու համար»,-ասաց նա՝ նշելով, որ մեր հասարակության մեջ բավականին մեծ վարկանիշ ունի այս մասնագիտությունը, և դպրո-



ԻՍԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՈՐԸ ՊԱՀՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ԱՎԵՏՈՑՈՎ

Արդեն երկու տարի է, ինչ համա-տեղության կարգով դասավանդում են Քաջաթաղի շրջանի Տիգրանավան գյուղի Պ.Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում: Այն արդեն 6-րդ տարին է՝ կրում է Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյանի պատվավոր անունը: Դպրոցի յուրաքանչյուր դասարան անվանակոչված է հերոսների անուններով: Աշակերտները զիտեն նրանց կենսագրությունը, հերոսական կյանքի մանրամասները: Ամեն տարի նրանք մեծ պատասխանատվությամբ ու հարգանքով նշում են հերոսների ծննդյան և մահվան օրերը: Ձիճղեկ, Արցախյան ազատամարտի մասնակից փոխգնդապետ Պողոսյանը ամեն ինչ ամուսն է աշակերտների հայրենասիրական ոգին բարձրացնելու համար: Տնօրեն էլլա Միրզոյանի խորին համոզմամբ՝ դպրոցում տարվող միջոցառումներն ավելի են խորացնում աշակերտների գիտելիքները, բարձրացնում գեղագիտական ճաշակը: Այդ համոզմունքի հետևանքն են դպրոցում տարվող բազմաթիվ և բազմազան համոզմունքային միջոցառումները: ոչ մի տոն, ոչ մի առիթ չի անտեսվում:



Վերջերս ներկա եղա «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառմանը, որը կազմակերպել էր դասվար էլլա Միրզոյանը: Դասի ձևավորումը կատարել էին կերպարավետի ուսուցչուհի Ալվարդ Գրիգորյանը և համակարգչային օպերատոր Արմենուհի Թարոյանը: Էլլա Միրզոյանը այս դպրոց է տեղափոխվել վեց տարի առաջ՝ Գորիսից, որտեղ տասնինը տարի դասավանդել է Ալ. Բակունցի անվան միջնակարգ դպրոցում: Բազմակուսակցական խորհուրդում հարգում և սիրում են ոչ միայն կուլեկոմիկում, այլև ծնողներն ու աշակերտները: Մա-

տաղ սերնդին կրթելը պատվավոր գործ է, ինչը և պատվավոր պատասխանատվությամբ ու սիրով անում է հմուտ դասավարդը: Միջոցառումը դիտարժան էր, փոքր, կիսաքանդ դահլիճը շքեղ զարդարված էր ծաղիկներով, Մաշտոցի մեծադիր նկարով, այբուբենի տառերի գեղագարդ աշխարհով: Պատին՝ պատասխան վրա, փակցված էին երեխաների ձեռագրերը, նրանց կատարած աշխա-

տանքները՝ նկարներ, ձեռագործ աշխատանքներ: ով ինչով փայլել էր տարվա ընթացքում: Ամրացված էին նաև լուսանկարներ, որոնք արվել էին ուսուցչուհու կողմից: Նա լուսանկարել էր փոքրիկներին դասերի ընթացքում և որպես հիշատակ՝ դրանք նվիրեց աշակերտներին: Միջոցառումն սկսվեց աշակերտների ասմունքով: Նրանք մեծարում էին Մաշտոցին, շնորհակալություն հայտնում Այբբենարանին, որին անձնավորել էր 5-րդ դասարանի աշակերտուհի Սաթենիկ Մարտիրոսյանը, երգում էին, պարում: Երաժշտությունը ապահովում էր տնօրեն էլլա Միրզոյանը, որը դաշնամուրի առաջ նստած՝ նվագում էր այնպես վարպետորեն, այնպես ոգևորված, կարծես ինքն էլ էր մասնակցել: Դահլիճում նստածներս նույնպես փոխադրվել էինք անցյալ և նրանցից ոչ պակաս

խանդավառությամբ ձայնակցում էինք: Ուրախությունն ու ոգևորությունը հասան իրենց գագաթնակետին, երբ դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ Ա. Գրիգորյանը հայտարարեց առաջին դասարանի Անի Հակոբյանի ծննդյան օրը: Տնօրենի նվագակցությամբ բոլորս երգով շնորհավորեցինք աշակերտուհուն: Վերջում ուսուցչուհին երեխաներին նվիրեց իրենց Այբբենարանները և իր կողմից նվիրված հեքիաթի գրքեր: Նրանք խոստացան ընթերցել գրքերը և նոր ուսումնական տարում պատմել:

Միջոցառման առթիվ ելույթ ունեցան ծնողները՝ իրենց շնորհակալական խոսքերը ուղղելով ուսուցչուհուն, կուլեկոմիկին, տնօրենին: Ելույթ ունեցավ նաև փոխտնօրեն Մետաքսյա Սեդրակյանը, որը նույնպես շնորհավորեց փոքրիկներին և նշեց, որ այդպիսի դիտարժան և բարձր մակարդակով անցկացվող միջոցառումները խթան են

հանդիսանում աշակերտների գիտելիքների հարստացմանը: Ես տպավորված էի, բայց և՛ մտախոհ: Այս շնորհալի աշակերտները չունեն դահլիճ, չունեն համապատասխան հարմարություններ, սովորում են կիսաքանդ դպրոցում: Սակայն մտահոգությունս փոխվեց անսահման ուրախության, երբ տնօրեն է. Միրզոյանից իմացա, որ ԼՂՀ կառավարության կողմից արդեն հաստատված է Տիգրանավանում նոր դպրոցի կառուցման ծրագիրը: Իրավ, առանձնահատուկ ուշադիր պետք է լինել կրթօջախների հանդեպ, քանզի հողը ազատագրում և պահում են ոչ միայն արյունով, այլև՝ Մաշտոցով...

**Արփինե ԹԱՐԵՎՈՍՅԱՆ**  
**Այգեհովիտի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի**

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏՈՆ՝ ՌՈՒՄԱԶ ՆԵՉ



Հայ ժողովուրդն իր բազմաչափ զոյության դժվարին ժամանակաշրջանում շատ քիչ բարեկամներ է ունեցել, որոնց շարքում իր ուրույն դերն է ունեցել նաև ժողովուրդը: Ռուս գրականության ականավոր դեմքեր Պուշկինը, Գրիբոյեդովը, Լեյնոնտովը և ուրիշներ բարձր են գնահատել մեր լեզուն, մեր գրականությունը, մեր մշակույթը: Այդ սրտացավ, ջերմ, ազնիվ հուժանիզմով համեմատված բարեկամությունը իր արտացոլումը գտավ նաև արցախյան գարթոնքի տարիներին: Տեղին է հիշել Անդրեյ Սախարովի, Գալինա Ստարովոյտովայի, Արկադի Վոլսկու, Լիկոլայ Ռիժկովի հայանպաստ գործունեությունն ու աջակցությունը: Առայսօր շարունակվում է հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը, որի դրսևորումներից մեկը դպրոցներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներն են: Այդ նպատակին էր ծառայում Ստեփանակերտի հ.5 դպրոցի 2-րդ «ա» դասարանում կազմակերպված «Праздник буквара» գրական-երաժշտական ցերեկույթը, որի նախաձեռնողը դպրոցի ռուսաց լեզվի մասնախմբի ղեկավար Անահիտ Ավանեսյանն է, որի ներածական խոսքով բացվեց միջոցառումը: Այնուհետև աշակերտներն իրենց ողջույնի խոսք ուղղեցին ներկաներին, գովերգեցին ռուսաց մեծ լեզուն.

*Праздник начинается,  
Гости улыбаются,  
А дети постарайтся  
Сегодня показать, все, чему учились,  
Все, к чему стремились,  
Потому что в мире надо много знать.*

Աշակերտները սիրով արտասանեցին բանաստեղծություններ, երգեցին ռուսական մանկական երգեր, պարեցին: Գովերգեցին մայր, հայրենիք, բնություն, ընկերասիրություն: Շատ հետաքրքիր էին նաև բեմադրությունները՝ «Բուրատինոն և ծուլիկը», «Պապն ու շաղկամը»: Աշակերտների մեծ մասն օժտված է դերասանական ձիրքով:

Միջոցառումը մեծ նշանակություն ունեցավ, աշակերտները հասկացան, որ պետք է լավ սովորել նաև ռուսաց լեզուն: Հիրավի, որքան լեզու գիտես, այնքան մարդ ես: Երեխաները, տիրապետելով ռուսաց լեզվին, ավելի խորը կուսումնասիրեն բարեկամ ռուս ժողովրդի գրականությունը, մշակույթը: Միշտ պետք է հիշել՝ ուսումնասիրելով ռուսաց և այլ լեզուներ, առաջին հերթին պետք է բարձր ու անաղարտ պահենք մեր մեծ ուսուցչապետի՝ Մեսրոպ Մաշտոցի կերպը, մեր փառապանծ մայրենին:

**Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ**  
**Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անվան հ.5 հիմնական դպրոցի ՄԿԱԳՏ**

ԵՐԱՆՏԻՔԻ ՄԵԾ ԱՆԱԿՆԿԱԼ

Գրի ու դպրոցային, լուսյի ու գիտության ծարավ ու դրանով անմեռ մնալու գաղտնիքն իմաստորեն յուրացրած մեր ժողովրդի համար ուսուցիչը եղել է մնացել է այն մարդը, որի մեծության ու գործի առջև միշտ խոնարհվել են, որի անունը տվել են սիրով՝ հոգու խորքում սրբորեն պահելով պատկերը նրա՝ որպես հույսի պատգամ, որպես լավի ու գեղեցիկի վառ կանթեր:

Խրախուսանքի նպատակով երկու մայրաքաղաքների քաղաքապետների նախաձեռնությամբ մայիսի 25-27-ը Ստեփանակերտի հիմնական դպրոցների 10 ուսուցիչներ և բարձր առաջադիմություն ունեցող 10 աշակերտներ հյուրընկալվեցին Երևան քաղաքում:

Մայիսի 25-ին վաղ առավոտյան դեռ Լուսաստղը չմարած՝ նշված կազմով Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի մեթոդիստ Անահիտ Մեսրոպյանի գլխավորությամբ ճանապարհ ընկան դեպի Երևան: Բոլորիս հոգում անսահման խիճող կար ու բերկրանք, անթաքույց ուրախություն, հուզառատ ապրումներ... Շատերի համար այսպիսի ճամփորդությունն առաջին անգամն էր:

Չմայած նրան, որ ստեփանակերտցիներին սպասում էին մեր բարեկամները, մենք որոշեցինք, օգտվելով առիթից, լինել հայկական լեռնաշխարհի գողտրիկ անկյուններում:

Ստեփանակերտ-Երևան ճանապարհին մեզ սպասում էր Նորավանքը՝ հպարտորեն բազմած սեզ

լեռների ուսին: Նորաբաց արևի շողերը փայլում էին վանքի գմբեթին պարուրելով վանքի ներսի պատին ուրվագծված Տեր Հիսուս Քրիստոսի դիմագիծը: Մենք մեր աղոթքն ուղղեցինք առ Աստված և օրհնություն ստացանք Նորավանքի քահանայից:

Հիացած ու ապշած պատմական Սյունիքի Վայոց Ձոր գավառի բարձրաբերձ ժայռերով ու բնությամբ՝ մտանք Ջանգալատուն: Մեծ անհատակություն ու տաղանդավոր գրող Պարույր Սևակի տուն-թանգարան: Տեսանք բանաստեղծի կյանքի ու ստեղծագործությանը նվիրված տարբեր փուլերին վերաբերող ցուցանմուշներ, անձնական իրեր, ունկնդրեցինք գրողի կենդանի ծայրով գործեր:

Միջօրեն անցած՝ հասանք մեր մեծ ուստան Երևան: Քաղաքապետարանի մուտքի առաջ մեծ շքախումբ էր. մեզ սպասում էին Երևանի մի շարք դպրոցների տնօրեններ, քաղաքապետարանի կրթության բաժնի ներկայացուցիչներ: Յուրաքանչյուր դպրոցի կցված էր անվանակից դպրոց: Իսկ մեր Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցը, քանի որ առ այսօր ամուսն չունի, Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 դպրոցի հետ կցվեց Երևանի Խ. Աբովյանի անվան հ. 84 դպրոցին:

Հուզառատ հանդիպում էր, տպավորիչ: Այնքան ջերմ էր մթնո-

լորտը, տրամադրող ու հյուրընկալ, որ թվում էր, թե վաղուց ճանաչում էինք միմյանց:

Հաջորդ օրը Երևանի Խ. Աբովյանի անվան հ.84 դպրոցի բակում աղ ու հացով ու հոգու ջերմությամբ մեզ դիմավորեցին դպրոցի տնօրեն Արկադի Էլոյանը, փոխտնօրեններ Լուսինե Հարությունյանը, Սուսան-



նա Աստղյանը՝ միանման համագեատով, աչք շլացնող ժպտաթեմ աշակերտներ:

Հատկապես մեծ հիացմունք ու տպավորություն ստացանք նույն դպրոցի աշակերտներից, ովքեր իրենց դերասանական արվեստով ցնցեցին ներկաներին ներկայացնելով Պերձ Զեյթունցյանի «100 տարի անց» ներկայացումը: Դպրոցի տնօրինության ուղեկցությամբ եղանք դպրոցի ամունը կրող հայ նոր գրականության հիմնադիր ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում:

Ապա քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Գայանե Սողոմոնյանի ուղեկցությամբ մեզ՝ ստեփանակերտցիներին, հյուրընկալեց Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը՝ գոհունակություն հայտնելով Երևանի և Ստեփանակերտի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում հետզհետե սերտացող ու խորացող փոխգործակցությունից:

Հագեցած ծրագիր ունենալով հանդերձ՝ քաղաքապետը ներկաներիս խոստացավ հաջորդ այցին լինել Երևանի կենդանաբանական այգում, իսկ վերջում արժանացանք քաղաքապետի նվերներին:

Հայոց ցեղասպանության զոհերին հարգանքի տուրք մատուցելու և սերունդների հիշողության մեջ մեր պահանջատիր լինելու զգալի արդյունք էր ստացվելու նպատակով այցելեցինք Ծիծեռնակաբերդ բլրի բարձունքի վրա կառուցված Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր և Տեղասպանության թանգարան:

Մեր էքսկուրսիան ուխտագնացություն դարձավ, քանզի այցելեցինք Երևանի քաղաքապետարանին կից Երևանի պատմության թանգարանը, «Երեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, որը գտնվում է Արին Բերդ բլ-

**Անդրա ՏՈՆՅԱՆ**  
**Ստեփանակերտի հ.6 հիմն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի**









ԱՅԼԱԶԱՆ

ԾԱՂԿԱԶԱՆ ՍԱՐԵՐ

Ծաղկաշատ սարերի ծաղկաշատ լանջերին փռված գյուղս, սաղարթախիտ եղևնանտառի փեշերին փռված գյուղս, գետնի տակից ժայթքող, բուժիչ ջրով շրջապատված գյուղս, հարևան թուրք գյուղի մոլլայի ազանի և իմ գյուղի եկեղեցու զանգերի կռվածքում հայտնված գյուղս, դատարկաբնակ շատ տների մութ, խռռչանման պատուհանների մեծավոր երգերի գյուղս, դռներից կախված ժանգոտված կողպեքների տրտուհներին կորացած, կորածք գյուղս, պանդուխտների վերադարձի մարող հույսով ապրող գյուղս, անցյալում գահագարող, այսօր գահագուրկ գյուղս: Ա՛խ, գյուղս, գյուղս: Այս տողերս ճիշն են ցավիս, մրմուռը՝ հոգուս, կակիժը՝ սրտիս, «տեր ողորմեան»՝ շուրթերիս:

Հազարից շատ աշակերտ ունեցող գյուղս այսօր թողարկում է չորս շրջանավարտ: Սա ճակատագրի մտրակածե՞ծ է առավոտից երեկո աղոթող գյուղիս մեջքին կամ գլխին: Հսկայական շենքի դատարկ դասարանները ապտակ չե՞ն արդյոք գյուղի նոյն ազնվաներին, թե՞ հաստուր Աբովյանի խլացած պատգամն է մեր պանդուխտներին՝ «Ձեր լեզուն դայիմ պահեցեք, դայիմ»:

Չավախքի հայաբնակ գյուղեր, ո՞վ է ձեր տերը, վերև՝ Աստված, ներքև՝ ո՞վ: Տարին մեկ անգամ ձեր հեռացած գավակների գրպաններից թափվող գրոշների գայթակղիչ զնգոցից չե՞ք արդյոք շարունակվում մեծանալ դատարկ տների թիվը: Բայց այդ գրոշներով է հոգեվարքի մեջ

գտնվող գյուղս երբեմն-երբեմն հագնում տոնական զգեստ՝ զատկական կալում, գյուղամեջում ուս ուսի տված, շրջան կազմած պարելիս:

Գյուղս՝ անցյալի և ապագայի խաչմերուկում հայտնված գյուղս, որը համառորեն չի քաշում փեշերը դատարկ թաղերից, որը համառորեն քանդում է դատարկ տները լցված փուշն ու տատասկը, համառորեն կառչում է մի քիչ թթվածին մատակարարող հովեկների բերող հովին: Ա՛խ, գյուղս, գյուղս՝ եղեռնից խուսափած, սպիտակ կոշիկով եղեռնի միջնամատը դարձած գյուղս: Ուրախանա՛մ, թե՞ տխրեմ: Գրոշների թողած հետքերի՞ համար ուրախանամ, թե՞ կրկին դատարկված թաղերից եկող տնջոցը, հառաչը, կարոտը հավաքեմ, մի բռունցք դարձնեմ ու գնամ տեր կոշիկով պետության աչքամեջը դառնեմ, որ ցավից աչքերը լայնանան, բացվեն, մրմռան, արցունքներ միզուցեն հանեն, որից մեղմանան գյուղիս ցավերը, գուցե տներս լցվեն, երգեն ու պարեն, դարոցիս զանգերը երկհերթ դողանցեն, թե՞ այդ բռունցքով հարվածեմ գլխիս, որ երազախաբ չլինեմ: Գրիչս շվարել է, չգիտի՞ ինչ գրի, բռունցքի հարվածը ում կողմը ուղղի, և հանկարծ հնչում է ապուպապիս ծայրը՝ խրոխտ՝ բռունցք ունես, չգիտե՛ս ում գլխին իջեցնես, մատներդ հավաքիր ու բռունցք արա, նոր մտածիր, թե ում գլխին կամ մեջքին այն պիտի իջնի:

Ես՝ երազախաբ, գրիչս՝ շվար, գյուղս՝ մուրոված, գավակները՝ պանդուխտ: Բռունցք է

պետք, մարդիկ, բռունցքը ուժ է, ուժեղին հարգում են, հաղթողին՝ առավել: Բռունցքվիր. գյուղս:

Գյուղիս ոտքերի տակից մեր Մեծ գետն է փշուր, փրփրաբաշ, ջրերը տալիս մեծ-մեծ քարերին ու փոշմանած հետ քաշվում, լցվում մոտակա բանջարանոցներն ու ոռոգում:

Խոսում եմ նրա հետ: - Լսիր. Գետս, քո ցատուճը տարածիր գյուղիս վրա: Ասա նրան, որ մինչև ցատուճ չլինի, բողբոջ չլինի, չի պայթի ազատության բողբոջը: Պատմիր գյուղիս, ինչ ես տեսել երգում, ինչ լուր ես բերել իմ Նորշենից, այդ ի՞նչ օրն են քեզ գցել, որ այդպես կատաղած ես, Գետս: Մեկ-մեկ լվա մախիմներիս շիրիմները և հող բեր, մատուց բեր նրանցից: Խոսիր Գետս, դատարկիր սիրտդ, որ հանդարտվես, մեղք ես, չե՞:

Գետը չհամոզվեց, և ես վեր կացա ու քայլեցի չափած, նկարած, փխրեցրած բանջարանոցների մոտով: Նայեցի, նայեցի ու հարց տվի.

- Ձեզ ի՞նչ եղավ, հը՞, դուք ինչո՞ւ եք խռովել ձեր տերերից, այս գյուղից, պակաս են խնամում ձեզ: Ես հիշում եմ, թե կոլտնտեսությունը մեկ աշխօրին ինչ ծներուկ ու սեխ էր տալիս, տասնյակ արկղերով լուլիկ, դուլյով մեղր, որը իմիկվա մեղրի ման չէր, այլ ափաչափ գնդեր էին:

Հասա կիսափուլ ակունքի մոտ: Այստեղ ներկայացված բոլոր պիեսների հերոսների տրտուռը լսեցի: Անթաղ շիրիմ էր ակունքը: «Չար

ոգու» գիժ Դանիելը լացում, հետո քրքրում էր պատերի ներսում, Պեպոն բողբոջում անարդար աշխարհից, «Նամուս»-ի Բարխուդարը կարծում էր, թե այստեղ էլ է Շամախու երկրաշարժը հասել, իսկ Գիքորը, Գիքորը «եստի համեցեք» էր կանչում գյուղից հեռու ապրող փողատերերին: Անթաղ գերեզմանոց է ակունքը, գյուղս:

Բարձրանում եմ ու աչքիս առաջ հառնում է գյուղիս միակ սփոփանքը՝ եկեղեցին՝ իր վեհ զանգակատնով, այնտեղ հաճախող մարդկանց հոսքով: Դե արի, թունամյան ու մի ասա քունը, թող մերը ասենք.

Պաս ենք այնտեղ մենք պահում, Գիշեր-ցերեկ աղոթում, Բայց մի աղետ, մի փորձանք, Գտնում է մեզ շարունակ...

Շարունակում եմ բարձրանալ ու հասնում եմ դպրոցի հին շենքին: Կծկվում է սիրտս: Այք, բենը այստեղ եմ սերտել, բայց մեկ էլ դռնից, տեսնում եմ, դուրս են գալիս մանկիկներ: Փառքը շատ Աստված, մանկիկներ ունենք, շնչելը դառնում է ավելի հեշտ, ուներս բացվում են, բացվում են թևերս, և ես գրկում եմ օդից կախված զանգակատունն ու հնչեցնում զանգերը, զանգերն ապրողաց ու Սևակից սովորելով գրում բառերս.

- Կոչե՛մ ապրողաց...

ԱՆՆԱ ԱԹՎԱԶՅԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՒՇԵՐ՝ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ

Յուրաքանչյուր ոք կարոտով, հուզմունքով է հիշում դպրոցական տարիները, դասընկերներին, ուսուցիչներին: Տարիների հեռավորությունից այդ օրերն ավելի են կարևորվում, դառնում թանկ հիշողություն: Կարծում եմ՝ բոլորն էլ դպրոցում սովորելու տարիներին զավեշտալի շատ դեպքերի են ակնհաստես եղել կամ էլ հենց իրենք են եղել «գլխավոր հերոսը»:

Այդ ամենը հիշելով՝ ակամայից դեմքիդ ժպիտ է հայտնվում, աչքերիդ՝ արցունքներ. դա կարոտի ու անվերադարձ օրերի արտացոլումն է կարծես:

Ես էլ հայացք ձգելով փորձեցի արձանագրել իմ սերնդի լավագույն հուշերից թեկուզ մի քանիսը: Դրանք շատ թանկ են ինձ համար, ինչպես որ թանկ է իմ սիրելի կրթօջախը՝ Խնասպատի միջնակարգ դպրոցը...

\*\*\*

Գրականության դաս էր: Եղիշե Չարենցին հատկացված վերջին դասաժամն էր:

10-րդ դասարանի աշակերտներից մեկը ձեռք բարձրացրեց և շատ լուրջ դեմքով հարցրեց.

-Ընկեր Մայիլյան, Չարենցը հայա՞...

\*\*\*

Ռուսերենի ուսուցչուհին հարց ուղղեց դասարանին, թե ինչպես կթարգմանեն «читать выразительно» արտահայտությունը: Առանց երկար-բարակ մտածելու՝ Աննան ոտքի կանգնեց և պատասխանեց.

-Կարդալ՝ չվռագելով:

\*\*\*

Գրականության դասի թեման էր «Հր.

Մաթևոսյանի «Ալխո»-ն»:

Կարենը դասը չէր սովորել, բայց վստահ ոտքի կանգնեց և նույնքան վստահ սկսեց պատմել դասը՝ առաջին իսկ նախադասությունից մատնելով իրեն. «Ալխոն շատ լավ, բարի ու հոգատար մարդ էր...»:

\*\*\*

10-րդ դասարանում ընկեր Մայիլյանը շարադրություն էր հանձնարարել՝ «Իմ սիրելի ուսուցիչը» վերնագրով:

Դասարանի թույլ սովորողներից մեկը կողքի նստածից սկսեց արտագրել՝ փոխելով միայն առաջին նախադասությունը.

-Իմ սիրելի ուսուցչուհի ընկեր Հայրապետյանը մեզ սովորեցնում է հայ ժողովրդի բազմադարյան կենսաբանությունը:

\*\*\*

Մաթեմատիկայի դասն էր: Մեր սիրելի ուսուցիչ ընկեր Բեգլարյանը ինձ կանչեց գրատախտակի մոտ:

Տեսնելով, որ դժվարանում եմ, ընկեր Բեգլարյանը դիմեց ինձ.

-Հը՞, Վասիլիսա, էլիա քաշկերող հրվրքվեցե՞ն: Քունը թունամյան պիտի, Չարենց... վեր մաթեմատիկին ժամը կյանա, մըքնըվումըս, խեկիրումը՛ս:

-Ընկեր Բեգլարյան, -փորձեցի արդարանալ,- մին երկու քայլում անում, էլ կարումչում շարունակիմ:

-Տուվել չուրըքթաթ տո:

\*\*\*

Գրականության դասին Լուսինեն փորձում էր դասարանի թույլ սովորող Նոնային համոզել, որ դաս պատասխանի:

-Նոնա, հիշտա, ձեռք պիցրցրու, պատմե, մին լավ գնահատական ստանաս, շուտ ըրա, ձեռք պիցրցրու:

Նոնան, որ ձայնի շատ ցածր տեմբր ուներ, հանկարծ բոլորի համար անսպասելի գոռաց.

-Ախճի, հիշտա, տու քինա պատմե:

\*\*\*

Ակսել Բակունցի «Միրիադ»-ը պատմվածքի վերլուծությունն էր: Լուսինեն ոգևորված պատմում էր. «Սոնան թռավ միրիադի պես՝ Դիլան դայու մոտ թողնելով լաջվարդ շապիկը...»:

\*\*\*

Ռուսերենի ուսուցչուհի Ջուլիետա Խորեմովնան Ռինատին կանչեց գրատախտակի մոտ և հանձնարարեց ռուսերեն գրել երբ և որտեղ է ծնվել:

Ռինատը գրեց. «Я родился в Аскеранском районе, Ханабадской средней школе»

\*\*\*

Գծագրության դաս էր: Ուսուցիչը՝ ընկեր Բեգլարյանը, ուշադիր նայելով Աննայի գծագրին՝ շատ լուրջ դեմքով ասաց.

-Մենակ դյուզն ասե, ես ուժիմը էլիա ես թուխտեն յիրա՛յք ըրալ...

\*\*\*

Կենսաբանության դասին ընկեր Հայրապետյանը, դիմելով Յանային, ասաց. -Յանան, ցույց տուր վերջույթներդ: Շփոթված Յանան ամոթից շիկնեց և չէր պատասխանում:

Ուսուցչուհին կրկնեց հարցը: Տեսնելով, որ այլընտրանք չունի, պիտի պատասխանի,

արագ մոտենում է ուսուցչուհուն և ցածր ձայնով ասում.

-Ընկեր Հայրապետյան, անհարմարա, ես ձեզ դասամիջոցին ցույց կտամ...

\*\*\*

Պատմության թեման Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.) կառավարման ժամանակաշրջանն էր: Մեր շատ սիրելի ընկեր Գրիգորյանը փորձում էր բացատրել տարեթվերի ելությունը: Աշակերտները դժվարությամբ էին ըմբռնում:

Դիմելով ուսուցչուհուն՝ ասացի. -Ընկեր Գրիգորյան, ինչ չըջարվումըք, ըսեցեք զարմիյա քեցալ...

\*\*\*

Ավարտական դասարանների աշակերտները, մի խումբ ուսուցիչներ՝ տնօրենի գլխավորությամբ, էքսկուրսիա էինք գնացել Տաթև:

Արդեն տուն էինք ուզում վերադառնալ, երբ ընկեր Բեգլարյանը Լուսինեին հարցրեց.

-Լուսին, տես եկեղեցունը մարդա՞ մնացալ: -Հէ, ընկեր Բեգլարյան, մենակ դասատվեքնը,-շատ լուրջ պատասխանեց Լուսինեն:

\*\*\*

Կրոնի ուսուցչուհին մագերը հարդարել էր: Երբ մտավ դասարան և սկսեց աղոթքը շնջալ, Արևիկը, աչքը չկտրելով ուսուցչուհու մագերից, ասաց.

-Ընկեր Ներսիսյան, էդ պարիկը՞ս տիրալ:

ԱՆԱԿԻՊ ՄՆԼԵՈՒՄՅԱՆ ԽՆԱԿԱՎՈՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԱՊՐՈՑ ԽԱԿԻԿԻՆ շՋԶԱՆԱՎԱՐԱՊ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շուշիի Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանը(ԵՄԱՌԻ) հայտարարում է 2015 -16 ուստարվա ընդունելություն՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

- Ջերմամեներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում
- Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ
- Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում
- Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում

Ուսումնարանը ապահովված է հանրակացարանով, ճաշարանով, լիարժեք սարքավորված արհեստանոցներով, համակարգչային լսարաններով, գրադարանով, մարզասրահով և սպորտալին հրապարակով:

Ուսումնարանի արտադրական ուսուցման վարպետները և տնօրինությունը վերապատրաստ-

վել են ֆրանսիական արհեստագործական ուսումնարաններում և շինարարական ընկերություններում:

Ուսումնարանի սովորողները սովորելուն զուգահեռ աշխատելու են շինարարական ընկերություններում, ստանալու են պետական կրթաթոշակ և աշխատավարձ:

Ընդունելությունը կազմակերպվում է 9-ամյա կրթության հիմքի վրա՝ անվճար հիմունքներով: Ուսման տևողությունը 3 տարի է, շրջանավարտներին տրվում է պետական մոնիթինգի դիպլոմ:

Դիմումներն ընդունվում են սույն թվականի հունիսի 1-ից մինչև օգոստոսի 25-ը, ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 16:00:

Դիմումների համար այցելել ք. Ստեփանակերտ, Թունամյան փ. 62,

ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն, 2-րդ հարկ, 3-րդ սենյակ:

Մանրամասների համար զանգահարել (097) 35 71 93, (097) 12 62 76

Ամիսաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում (լրացվելու է տեղում)
- 3 x 4 չափի երկու գունավոր լուսանկար (վերջին մեկ տարվա)
- ավարտական վկայականը (ընթերցանել)

<b>ԼՈՒՍԱՐԱՐ</b> ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ	✉ Ստեփանակերտ, Հ. Թունամյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info	Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:	Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 12.06.2015թ.:
---	-----------------------------	--	--	---

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: